ժէ. — Ձեր գալը է բարի եղբայրք որ ի յայս տեղիքս եք եկել,
Յաշխարհս ինք արտում ամէնքս ու խոցով մեր սիրտն է լցել,
Ձեր խօսքդ մեզ դեղ եղաւ ձեր տեսովդ ենք մենք խնդացել,
Հազար երնեկ այս աւուրս՝ որ մէկտեղ ենք մեք ժողովել։

ժը. — Թագաւոր ու սուլդան և իշխանք որ ի բարձր աթոռ էք նստել,
Շատ ճորտ ու ծառայք և զօրք կան ի ձեր առջեւդ կանգնել,
Ահեղ ու սաստիկ հրաման ու հանդէս էք դուք յաւրինել,
Ուղորդ դատաստան արացէք զի ձեզ այլ տեղն կայ պահել։

ժթ. — Հզօր թագաւորք և իշխանք որ դարպաս էք դուք յաւրինել,
Զայուշ ու պահնորդ դրել զձեր երեսդ ի մարդոյ պահել,
Գանգատ ու զրկած մարդիկ անճարակ են շատ շիւարել,
Դրէք միտ ու դատ արէք զերթ յաստուծմէն առ ձեզ եկել։

ի. — Մարդն որ սիրելիք ունի և ի նոցա միջէն բաժանի,
Հաշւեց թէ ի մահ կերթայ և ի մարմնոյն շունչ կու քաղի,
Ձերդ ձուկն ի ջրէն հանած նայ այլ ոնց կենայ կենդանի,
Ի բարկ կրակին դնեն խեղճ և ողորմ ինքն խորովի։

իա. — Այլ ողորմ չեք տեսել թէ ունի մարդ շատ սիրելի,
Եւ ինքն ի նոցա միջէն կարաւտով ի բաց կու գատի,
Յորժամ տօն աւրեր լինի կամ զատկի կամ բարեկենդանի,
Ամէնքն են ուրախ ծաղկած նայ կտրած զերդ ճուղ մի ծառի։

իբ. — Շաղ ածես ի չորս իրաց այդ ցեղ շէնքդ ամուր չլինի,
Աւդըն հողուն ինչ նման հուրն ու ջուրն են խիստ ատելի,
Ի հակառակաց ստեղծած և եղած ես մարդ կենդանի,
Վերնա օդն ու հուրն ու ջուրն և մարմին դառնայ փոշի։

իգ. — Մարդն որ շատ անդէճ լինի յաշխարհիս հոգուն կու մաշի,
Շաքարն իւր լեղի թուի և լեղին իւրըն խըմելի,
Հով ջուրըն կրակ թուի և յահէն զերթ մոմ կու հալի,
Ձգխւր կեանքն դժար հաշուի և ի դժարին իսկի չհանկչի[1]։

իդ. — Երնէկ ես նորայ ասեմ որ յաշխարհս ի սուք կու կենայ,
Ձիւր մեղքն ի յիշումն ատտուած է զօրն ի բուն նայ նստի ու լայ,
Արտասունքն սապոն լինի սեւութիւնըն սպիտականայ,
Թէ չէ օր հարսնիցըն գայ նայ հանդերձ հարսին չունենայ։

տողերէ բաղկացեալ։ Իմ քառեակիս տողերը կը գանուին հրատարակուածին սկիզբի երկու տողերը, քիչ մը տարբեր ասպէս.

Զինչ զԱնարոնի գլուխն, որ ծաղկանց խղովն օծեալ է,
կամ զօղն Անեռմոն լեռին, Սուկաւ լեառն բուսեալ է,
Ոչ զարունն ջուր կ'ուզէ, ոչ աշունն թոռմելու է,
չանցզուն ծաղիկ ով տեսեր, զարարածս չէն կու պահէ.
Նորա ծաղիկ ով աւէ, երբ նորա անունն Յիսուս է։

Սկիզբի երկու տողերը վերջին երեք տողերուն հետ ո՛ր և է կապակցութիւն չունին, աւելի ճիշտ ըլլալու համար ըսեմ որ սկիզբի մէկ ու կէս տողը կը տարբերի վերջին երեքուկէս տողերէն, որ ամբողջանալու համար Ա. տողէն կէս տողի պէտք ունի։ Զեմ գիտեր, արդեօք Պ. Զօպանեանի ուշադրութենէ՞ն է վրիպած այս մանրամասնութիւնը։

1. Ն. Գ. Դիւան թիւ ԼԶ։ Տողերը եաւ առաջ խառնուած են, ու վերի կարգը չունին։ Իմ գերթիս տեղ անդ քանց։ Իմ լեղին իւրըն, անդ՝ լեղին իւրան։ Իմ օրինակս նման է ծան. թիւ 242ին օրինակին՝ անդ։